600.0442.07.11.12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

7 նոյեմբերի 2012 թվականի №442Ն
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի N169Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի բ) ենթակետը, 17-րդ հոդվածի 5-րդ մասը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 13-ի «Ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման կարգը հաստատելու մասին» №169Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում՝ ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման կարգում (այսուհետև՝ Կարգ) կատարել հետևյալ փոփոխությունները.

   1) Ուժը կորցրած ճանաչել Կարգի 15-րդ կետի 1-ին ենթակետը.

   2) Կարգի 15-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

   «2) անձնագրի պատճենը, եթե հայտատուն ֆիզիկական անձ է.».

3) Կարգի 37-րդ կետից հանել «, իսկ իրավաբանական անձանց համար՝ նաև Թույլտվություն ունեցող անձին գրանցող պետական լիազորված մարմնի կողմից տրված՝ Թույլտվութուն ունեցող անձի կանոնադրությունում կատարած փոփոխությունների կամ դրանց բացակայության մասին տեղեկանքը» բառերը.

4) Կարգի NN1-4-րդ հավելվածների 1-ին կետերում «Հայտատու (ֆիզիկական անձի անունը, ազգանունը, իրավաբանական անձի անվանումը,» բառերը փոխարինել «Հայտատու (ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը, պետական հաշվառման համարը, իրավանաբական անձի դեպքում՝ անվանումը, պետական գրանցման համարը)» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
7 նոյեմբերի 2012թ.